



# Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



### ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏՔ ԵՕԹԱԵՐՈՐՈՂ ԿԻՐԱԿԻ

01 ՆՈՅԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Պտղաբեր	էջ 2
Ծանուցում	էջ 4

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ**  
 (22.15-25)

*Այսպէս կ'ըսէ Տէրը, Երկնային Զօրքերու Տէրը.*

« Գնա՛ արքունի հազարապետ Սոմնասի դիւանը մտիր եւ ըսէ իրեն.- ինչո՞ւ հոս եկած ես, ի՞նչ գործ ունիս հոս, որ այստեղ քեզի գերեզման փորել կու տաս, այս բարձունքին վրայ քեզի ժայռափոր դամբարան կը շինես: Լսէ՛, ո՛վ մարդ, Երկնաւոր Զօրքերու Տէրը քեզ հոգկէ պիտի հանէ եւ քաշկռտելով դուրս նետէ. քեզ մեծ եւ անսահման երկիր մը պիտի նետէ եւ հոն պիտի մեռնիս: Քու գեղեցիկ կառքդ անարգանքի առարկայ պիտի ըլլայ եւ իշխանական տունդ՝ ոտքի կոխան: Աստուած քեզ քու պաշտօնէդ եւ քու դիրքէդ պիտի հեռացնէ: Այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս, Քեղկիայի որդի Եղիակիմը, եւ քու պատմութեանդ անոր պիտի հագցնեմ, անոր պիտի տամ քու իշխանական պսակդ, եւ անոր պիտի յանձնեմ արքունի հազարապետութիւնը, որպէսզի հօր մը պէս կառավարէ Երուսաղէմի եւ Յուդայի բնակիչները: Դաւիթի տան վերակացութիւնը անոր պիտի տամ. պիտի իշխէ, եւ ո՛չ ոք պիտի ընդդիմանայ անոր: Իր վճիռները բացարձակ պիտի ըլլան. ո՛չ

*ոք պիտի կարենայ փակել ինչ որ ինք կը բանայ, եւ ո՛չ ոք պիտի կարենայ բանալ ինչ որ ինք կը փակէ: Զայն իշխան պիտի կարգեմ եւ ամբօրէն հաստատեմ պատին ամրացուած գամի մը պէս, եւ անիկա իր հօրը տան փառքը պիտի ըլլայ: Իր հօրը տան մէջ դիրք ունեցող բոլոր մարդիկը, փոքրէն մինչեւ մեծ իրենց յոյսը անոր վրայ պիտի դնեն եւ իրմէ կախուած պիտի ըլլան. եւ ինչպէս երբ տան մը բոլոր անօթները, փոքր ամաններէն մինչեւ մեծ կաթսաները մէկ գամէ կախուին՝ գամը կը խախտի ու կ'իյնայ, այնպէս ալ, - կ'ըսէ Երկնաւոր Զօրքերու Տէրը, - գամի մը պէս հաստատուած Եղիակիմն ալ պիտի շարժի, պիտի իյնայ ու կործանի, եւ անոր փառքը պիտի կորսուի»: Տիրոջ վճիռն է ասիկա:*

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ԵՓԵՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**  
 (1.1-14)

*Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, կը գրեմ Եփեսոս բնակող եղբայրներուդ, Յիսուս Քրիստոսի հաւատացողներուդ: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:*

*Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն տեսակի հոգեւոր օրհնութեամբ: Անիկա աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն պատկանելու համար որպէս սուրբ եւ*

անարատ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ նախասահմանեց Յիսուս Քրիստոսի ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ ա՛յդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովենք զինք այն փառքին համար որ մեզի շնորհեց իր սիրելի Որդիին միջոցաւ: Արդարեւ, անո՛վ փրկուեցանք եւ անոր արիւննով մեր մեղքերուն թողութիւն գտանք: Ո՛րքան մեծ է իր շնորհքը որ առատօրէն տուաւ մեզի՝

երբ ժամանակները իրենց լրումին հասնին, Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին համաձայն մեզի յայտնեց շատ կանուխէն պատրաստած իր ծրագիրը, որ Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ ծրագիրը սա է, որ երբ ժամանակները իրենց լրումին հասնին,

Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Աստուած, որ Քրիստոսով ամէն ինչ կը յաջողեցնէ ըստ իր առաջադրած ծրագրին եւ կամքին, առաջուց հրաւիրեց մեզ՝ իր ժողովուրդը ըլլալու եւ իր փառքը գովերգելու. մենք, որ Քրիստոսի յուսացողներուն առաջիններէն եղանք: Դուք ալ, երբ լսեցիք ճշմարիտ քարոզութիւնը, այսինքն Աւետարանը որ ձեզի փրկութիւն բերաւ, հաւատացիք Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ Հոգիով կնքուեցաք: Եւ Սուրբ Հոգին գրաւական է՝ թէ պիտի ժառանգենք Աստուծոյ խոստումը, եւ որպէս իր կողմէ փրկուած ժողովուրդ՝ իր փառքը գովերգենք:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

(8.17-21)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.

«Չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն ուշադիր եղէք թէ ի՛նչպէս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի»:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խոռոն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ եւ եղբայրներդ դուրսն են եւ կ'ողբեն քեզ տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայրս ու եղբայրներս անոնք են որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

«Մայրս ու եղբայրներս անոնք են որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

**ՊՏՊԱԲԵՐ**  
ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

«...ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի»,  
Ղկ 8.18:

Ո՞վ է ունեցողը, եւ ի՞նչ ունի:  
Ո՞վ է չունեցողը, եւ ի՞նչ չունի:  
Բնաբանը որ նաեւ այս գրութեան նիւթն է, կը հետեւի հաստատումի մը եւ կոչի մը:

Այս է հաստատումը եւ այս է կոչը. «Չկայ ծածուկ բան մը՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն, ուշադիր եղէք, թէ ի՛նչպէս կ'ընդունիք այս խօսքերը» (Ղկ 8.17):

Համաձայն մէջբերեալին, ինչ որ պիտի տրուի ունեցողին՝ ուրիշ բան չէ քան այն՝ որ պիտի գիտցուի եւ երեւան պիտի գայ: Ունեցողին տրուելիքը ճրագի պէս է, զայն վառելէ ետքը աշտանակի վրայ կը դնեն, որպէսզի տուն մտնողները «լոյսը տեսնեն» (Հմմտ նոյն, Հմր 16):

Սակայն ի՞նչ է գիտցուելիքը եւ երեւան գալիքը, որ ճրագի կը նմանի:

Յիսուսի խօսքերուն ամբողջութիւնն է:

Իսկ ո՞վ է ունեցողը:

Ան է, որ ուշադիր է Յիսուսի ըսածներուն եւ զանոնք ընդունելու կերպը ունի: Նաեւ պատասխանատուութիւնը ունի ո՛չ թէ զանոնք «կաթսայի տակ» եւ կամ «մահիճի տակ» պահելու (Հմմտ նոյն), այլ դնելու յարմար տեղը՝ որպէսզի լուսաւորէ, այլ բացատրութեամբ մը՝ իրեն վստահուած ծառայութիւնը բերելու Յիսուսի խօսքերուն տարածման:

«Ուշադիր եղէք, թէ ի՛նչպէս կ'ընդունիք այս խօսքերը», կ'ըսէ:

Յիսուսի խօսքերը ընդունելու կերպը շատ կարեւոր է:

Ինչպէ՞ս հասկնալ կերպի մասին ակնարկութիւնը:

Բնաբանի անմիջական շրջագիծին մէջ պատմուած է Սերմնացանին առակը եւ մեկնաբանուած (նոյն, 4-15):

Յիսուս իր մեկնաբանութեան մէջ, սերմնահատիկը բացատրած է իբր Աստուծոյ Խօսքը (նոյն, հմր 11): Ան չէ ըսած, թէ ո՞վ է սերմնացանը: Սակայն ենթադրելի է, որ անով Յիսուս իր առաքելութեան փոխաբերութիւնը ըրած է նախ եւ առաջ, նաեւ տեսած բոլոր անոնք՝ որ Աստուծոյ Խօսքին սպասաւորները պիտի ըլլային:

Ուրեմն, Յիսուսի խօսքերը Աստուծոյ Խօսքն են՝ ցանուած թեւի լայն շարժումով մը:

Ըստ առակին, սերմնահատիկներէն ոմանք ճամբուն եզերքի հողին վրայ կ'իյնան եւ ոտքի կոխան կ'ըլլան, կամ երկինքի թռչունները գալով կ'ուտեն զանոնք:

Յիսուս բացատրած է, թէ ճամբուն եզերքը գտնուող հողը պատկերն է այն մարդոց, որոնք կը լսեն, սակայն Սատանան կու գայ եւ անոնց սիրտէն կը հանէ Աստուծոյ Խօսքը, որպէսզի չհաւատան եւ չփրկուին (նոյն, հմր 12):

Ասոնք այն մարդիկն են՝ որոնց «հող»ը «ճամբուն եզերքը» կը գտնուի: Չ'ըսեր «դաշտին եզերքը», այլ կ'ըսէ՝ «ճամբուն եզերքը»: Կարեւոր է ասիկա նկատի ունենալը: Այն մարդիկն են ասոնք՝ որոնց սիրտը Աստուծոյ խօսքը անցնելու ցանկութիւնը չունի, այլ աշխարհի ճամբուն բաց է:

Բնաբանին չունեցողը՝ աշխարհին յանձնուած մըն է:

Ուրիշ սերմնահատիկներ կ'իյնան ժայռոտ տեղ մը, եւ երբ կը բուսնին՝ անմիջապէս կը չորնան, քանի հողը խոնաւ չէ:

Այս պատկերին մասին հետեւեալ բացատրութիւնը տուած է Յիսուս. «Ժայռոտ հողը նմանութիւնն է անոնց, որոնք երբ կը լսեն Աստուծոյ Խօսքը՝ ուրախութեամբ կ'ընդունին, սակայն ասոնք արմատ չունին, այսինքն՝ ժամանակուան մը համար կը հաւատան եւ փորձութեան ժամանակ կը հեռանան» (նոյն, հմր 13):

Այս մարդիկը մակերեսային են. եւ մակերեսային մարդիկը ոչինչ կ'ունենան:

Բնաբանին չունեցողը նաեւ մակերեսային մարդն է:

Այլ սերմնահատիկներ կ'իյնան փուշերու մէջ, եւ երբ փուշերը միասին կը բուսնին՝ կը խեղդեն զանոնք:

Յիսուսի բացատրութեամբ, փուշերով ծածկուած հողը կը նմանի այն մարդոց, որոնք Աստուծոյ Խօսքը կը լսեն, սակայն երկրաւոր կեանքի հոգերը, հարստութիւնը եւ հաճոյքները՝ որոնցմով կ'ապրին, կը խեղդեն իրենց մէջ ցանուած Աստուծոյ Խօսքը եւ անպտուղ կը դառնան (նոյն, հմր 14):

Անպտուղ մարդիկը ոչինչ ունին:

Բնաբանին չունեցողը՝ անպտուղ մարդն ալ է:

Եւ սերմնահատիկներ կան՝ որ պարարտ հողին մէջ կ'իյնան ու բազմապատիկ պտուղներ կու տան:

Ըստ Յիսուսի, պարարտ հողը կը նմանի այն մարդոց, որոնք բարի եւ ուրախ սիրտով կը լսեն Աստուծոյ Խօսքը ու կ'ընդունին զայն, եւ յարատեւելով՝ պտուղ կու տան (նոյն, հմր 15):

Այս մարդիկն է, որ ուշադիր են եւ կերպը ունին ընկալելու Յիսուսի միջոցաւ աւետարանուած Աստուծոյ Խօսքը: Անոնք բարի եւ ուրախ սիրտով կը լսեն ու կ'ընդունին զայն: Այլեւ կը յարատեւեն անոր մէջ, այսինքն՝ Պօղոս առաքեալի յորդորին համաձայն, նոյնիսկ հալածանքներուն եւ չարչարանքներուն մէջ՝ կը մնան հաւատաւոր, սիրով, սրբութեամբ, յօժարակամութեամբ եւ համբերատարութեամբ, ի մի խօսք՝ կը մնան Քրիստոսի հետ միացած ապրելով (Հմմտ Բ. Տմ 3.10, 12):

Ունեցողը, ուրեմն, Յիսուսի աւետարանած Աստուծոյ խօսքը ունի, կը ծառայէ անոր եւ անով պտղաբեր կը դառնայ:

Չունեցողն ալ գիտես, թէ ո՞վ է:



30-ԱՄԵԿ  
Ս. ՅԱԿՈԲԻ ԿՐԻԱԿԱՏՐԵԱՅ  
ԿՐԹԱՐԱՆԻՆ

ՀՈՎԱՆԱԽՐՈՒԹԵԱՐ՝  
ԳՐԸ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐԲ.  
ՅԱԿՈԲԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ՝  
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵԱԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ԹԷՅԱՍԵՂԱՆ

ԲԱՆԱԽՕՍ՝  
ՀԳՐ. Տ. ԳԵՂԱՐԻ ՎՐԻ.  
ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ

(ԹԵԱԻՆ ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ  
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԻ ՎԱՐԻՉ)

ԵՐԹ՝  
ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ  
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՅԻ՝  
ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ Ա. ԱՇԱՐՈՒՆԵԱՆ  
ԱՐԱՀ


ԹՈՒԿԱՆ ԵՒ ԺԱՄ՝  
ՀԱՔԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-Ի  
ԵՐԵՎԱՆԻ ժԱՄԸ 7.00-ԻՆ

ՏԵԴԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՀԱՃԵՑԷՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ  
ՀԵՏԵԻԵՂ ԹԻԻՆ  
514 331 5445 x202

ԼՈՅՍ ՏԵԱՒ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I  
DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par  
Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝  
ՁՐԻ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿՐ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՐ ԵՐԿԱՅԱՆԱԼ  
ԵԿԵԴԵՅՈՅԱ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԽՕՐՕՔ  
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵԴԵՅՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՄ

ՆԱԽՈՐԴ ԹԻՒԵՐԸ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻՎԸ Ե-ՆԱՄԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՐԴՈՂԱՐԿԵՅԷՔ  
[eglise58@sourphagop.com](mailto:eglise58@sourphagop.com)-ԻՆ